

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ

ՔՈԼԵԶ ՊՈԱԿ

Սուրբապան Յուրա Խաչատուրի  
տնօրին



*[Handwritten signature]*  
Սուրբապան

29 12 2016 թ.

Կ. Տ.

ՀՀ Կրթության և գիտության

նախարարություն

ՔՈԼԵԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴ

ՆԱԽԱԳԱՀ

Լիկոյան Կարեն Գարսևանի

*[Handwritten signature]*  
Սուրբապան

07 11 2016 թ.

Կ. Տ.

**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ԴԱՄԱՆՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋՐՆԹԱՅԻ**

**ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

## ՆԱԽԱԲԱՆ

„Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ,, ՊՈԱԿ-ի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը և զարգացումը կենսական կարևոր ներդրում է և համարվում է քոլեջի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: Քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականությունը քոլեջի անձնակազմի զարգացման երկարաժամկետ ռազմավարությունն է, որն ուղղված է բարձր որակավորում ունեցող անձնակազմի ձևավորմանը և զարգացմանը: Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը անձնակազմի զարգացման ծրագրի ապահովումն է, այսինքն անձնակազմի մասնագիտական կողորոշման , անձնական մասնագիտական կողորոշման , անձնական առաջընթացի պլանավորումը, մասնագիտական պատրաստվածությունը և որակավորման բարձրացումը: Որակավորման բարձրացումը մասնագիտական առաջընթացի տեսակ է, որի միջոցով կարելի է ակտիվ փոխազդել քոլեջի ներքին միջավայրի վրա՝ փոփոխվող արտաքին միջավայրի ազդեցությանը արագ, ճկուն և արդյունավետ հարմարվելու նպատակով:

## ՆՊԱՏԱԿԸ

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականության նպատակն է քոլեջի մարդկային ռեսուրսի մասնագիտական աճի բարձրացումն ու զարգացումը: Սույն քաղաքականությունը ուղղված է հետևյալ գործընթացների իրականացմանը՝

- կադրերի որակավորման բարձրացման համար հնարավորությունների ստեղծում,
- աշխատողների արտադրողականության մակարդակի բարձրացում,
- աշխատողների մասնագիտական գործունեությունից բավարարվածության բարձրացում,
- մասնագիտական ոլորտում առաջխաղացում հարցերում աջակցություն ստանալ քոլեջի ղեկավար կազմի կողմից,
- անձնակազմի մասնագիտական հնարավորությունների կատարելագործում և զարգացում՝ քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացման համար:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- քոլեջի մասնագիտական գործունեության զարգացում բոլոր ուղղություններով,
- մասնագիտական առաջընթացի ապահովման համակարգի կատարելագործումը՝ նոր մեխանիզմների մշակման միջոցով,

- ժամանակակից, ամբողջական մասնագիտական առաջընթացի ապահովման և աջակցման մեխանիզմների մշակումը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- մասնագիտական առաջընթացի քաղաքականության իրականացման մեջ „Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ, ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանումների և ղեկավար անձնակազմի ակտիվ համագործակցություն,
- աշխատողների մասնագիտական աճի և աշխատանքի արդյունավետության բարձրացման աջակցություն՝ մրցակցային միջավայրի ստեղծման, արդյունքների և ձեռքբերումների օբյեկտիվ մեթոդների օգտագործման հաշվին,
- աշխատողների հետաքրքրությունների հաշվի առնում՝ առաջընթացի ապահովման հարցում,
- հետադարձ կապի մեխանիզմների ակտիվ օգտագործում, հարցումների պարբերական անցկացում՝ աշխատակազմի բավարարվածության սպասելիքների բացահայտման համար:

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատողների մասնագիտական առաջընթացի ապահովման հիմնական խնդիրն է՝ համապատասխան որակավորմամբ աշխատողներով ապահովել քոլեջի գործունեության բոլոր ոլորտները:

Քոլեջի բոլոր աշխատողները իրավունք ունեն և պարտավոր են անընդհատ զարգացնել իրենց մասնագիտական ունակությունները, որոնք անհրաժեշտ են գիտակրթական գործունեության զարգացման և կատարելագործման համար: Դրա համար քոլեջի ղեկավար կազմի կողմից պետք է կայացվեն որոշումներն կազմակերպվեն միջոցառումներ՝ կադրերի մասնագիտական առաջընթացի ապահովման հարցում աջակցություն տրամադրելու համար:

Աշխատողների մասնագիտական առաջընթացի վերաբերյալ քննարկումները պետք է իրականացնեն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Մասնագիտական առաջընթացը կարող է երաշխավորվել այն աշխատակիցների շրջանում, որոնք նպատակ ունեն անընդհատ զարգացնեն իրենց մասնագիտական կարողությունները և հմտությունները, և ապահովում են գիտակրթական գործունեության առավել բարձր ցուցանիշներ:

Մասնագիտական առաջընթացի ապահովման ենթադրում է՝

- առաջավոր փորձի, այդ թվում՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների տիրապետումը,
- որակի ապահովման և կառավարման սկզբունքների տիրապետումն ու կիրառման ունակությունը,

- մասնագիտական ոլորտի գիտական խնդիրների լուծումն ու համապատասխան որոշումներ կայացնելու ունակությունը,
- լեզվական կարողությունների զարգացումը՝ գիտակրթական գործունեության զարգացման համար:

Քոլեջի կողմից ապահովվում և խրախուսվում են մասնագիտական առաջընթացի ապահովման հետևյալ հիմնական միջոցառումները՝

- մասնակցություն պաշտոնական ուսումնական դասընթացներին և սեմինարներին(մասնավորապես անձնակազմի զարգացման ծրագրերում),
- ուսուցում աշխատանքային վայրում (ինքնուսուցում),
- անձնակազմի մասնակցությունը որակի ապահովմանը ուղղված դասընթացներին և սեմինարներին,
- անձնակազմի ուսուցման շարունակականություն կամ վերապատրաստումներ:

### ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մյուս քաղաքականությունը իրականացնող մարմիններն են քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, կադրերի բաժինը, որոնք առնչություն ունեն կադրերի ապահովման և զարգացման հարցերին:

### ՔԱՂԱՔԱԿՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը պետք է երաշխավորի կադրերի զարգացումը և գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Քաղաքականության իրականացման վերահսկման համար պատասխանատու է Որակի վերահսկման հանձնախումբը: